ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Տաշիր համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

Համայնքը	**Միջոցառման անվանումը**	**Օրը**	**Ժամը**	**Անցկացման վայրը**
Տաշիր	Ավագանու արտահերթ նիստ	23.07.2020թ.	11:30	**Տաշիրի** համայնքապետարանի նիստերի դահլիճ (ք.Տաշիր, Վ. Սարգսյան 94)

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԼՍԻ 23-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 23-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Է. Արշակյան/

2. Հողագրունտի հանույթի իրավունք ունեցող «Ճնապարհ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Անախասյան/

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում ընդգրկվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրմանը համաձայնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Շահբազյան /

ՆԱԽԱԳԻԾ 69-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 23-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 23-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Հողագրունտի հանույթի իրավունք ունեցող «Ճնապարհ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում ընդգրկվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրմանը համաձայնություն տալու մասին:

ՆԱԽԱԳԻԾ 70-Ա

ՀՈՂԱԳՐՈՒՆՏԻ ՀԱՆՈՒՅԹԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ «ՃՆԱՊԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՍԼԱՎԻԿ ԱՆԱԽԱՍՅԱՆ/*

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով, 76-րդ հոդվածի 5-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության N286 որոշումով հաստատված կարգի 44-րդ կետի «ժգ» ենթակետը, ՀՀ Կառավարության 2019 թվակնի մայիսի 10-ի «Հողագրունտի հանույթի կարգը

սահմանելու մասին» N 572-Ն որոշումով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 23.06.2020-ի թիվ 01/105.4/06216-2020 գրությունը՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանարպետության Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող , 06-072-0555-0001 կադաստրային ծածկագրով , հողագրունտի հանույթի տեղամաս հանդիսացող 2000քմ մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը առանց մրցույթի, վարձակալության իրավունքով տրամադրել «Ճանապարհ» ՍՊԸ-ին՝ 12000 խոր. մետր ծավալով հողագրունտի հանույթի աշխատանքներ իրականացնելու համար:

2. Հողագրունտի մեկ խոր. մետրի արժեքը սահմանել 300 դրամ:

3.«Ճանապարհ» ՍՊԸ -ի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:
4. Վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:

ՆԱԽԱԳԻԾ 71-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԸՆԳՐԿՎՈՂ` ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՄՈՒՇԵՂ ՇԱՀԲԱԶՅԱՆ*/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածով, 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, 94-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 16-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ գլխի պահանջներով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի վաչական տարածքում ընգրկվող պետական սեփականություն հանդիսացող հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը վարձակալության տրմադրմանը:

2. Սահմանել հողամասերի վարձակալության վճարի մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

3. Տաշիր համայնքի ղեկավարին՝ պատրաստել հողաշինարարական գործ և ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետին՝ համապատասխան եզրակացություն ստնալու նպատակով:

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու
2020թ. հուլիսի 23–ի N71- Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում ընդգրկվող՝ պետական սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրվող հողամասի մեկնարկային վարձավճարի չափն ու պայմանները

N	Հողամասի գտնվելու վայրը	Հողամասի ծածկագիրը	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը	Հողամասի չափը (հա)	Օգտագործման տրամադրման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը	Վարձակալության ժամկետը (տարի)	Վարձավճարի մեկնարկային չափը (դրամ)
1	Տաշիր համայնք գ. Դաշտադեմ	06-032-0612-0001	Գյուղատնտեսական	Արոտավայր	300,0	գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու	չկա	9	612000
2	Տաշիր համայնք գ. Դաշտադեմ	06-032-0599-0001	Գյուղատնտեսական	Խոտհարք	27,0	գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու	չկա	9	70875
3	Տաշիր համայնք գ. Դաշտադեմ	06-032-0608-0001	Գյուղատնտեսական	Խոտհարք	35,0	գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու	չկա	9	91875
4	Տաշիր համայնք գ. Դաշտադեմ	06-032-0610-0001	Գյուղատնտեսական	Խոտհարք	90,0	գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու	չկա	9	236250
5	Տաշիր համայնք գ.Մեղվահովիտ	06-076-0555-0001	Գյուղատնտեսական	Արոտավայր	350,0	գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու	չկա	9	714000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ն. ՍՈԼՈՅԱՆ